

փորուրար՝ երկու բաղաձան, մի շապիկ, մի գօտի եւ մի ուրար (Սարկաւագի) նուիրեց Ս. Տաճարի Մայր Աթոռոյս Էջմիածնի, որոյ Համար Ամսագրոյս միջոցաւ եւս խորին շնորհակալութիւն կմատուցանեմք յիշեալ բարեպաշտ իշխանին:

Մ Ի Խ Ա Չ.

Նուշեցի բարեպաշտուհի այրի Սահամ՝ Նիկողայոսեան Խաչատրեանց՝ յանուն եւ ի յիշատակ Հանգուցեալ առն խրոյ Աղապապայ Առաքելեան Խաչատրեանց՝ արծաթեայ ռսկեգօծ մի Խաչ նուիրեց Ս. Տաճարի Մայր Աթոռոյս, որոյ Համար հրապարակաւ շնորհակալութիւն կյայտնեմք՝ գովելով յիշեալ այրւոյն բարեպաշտութիւնը եւ իղձը՝ որով անհարազատ ձեռքերէն ազատուած հնաշէն եւ ըստ բաւականին ճարտարահիւս յիշեալ Խաչը (կոթը միայն նոր է) անկորուստ էր պահել եւ ընծայեց Ս. Էջմիածնի:

Գ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն .

Հեաագայ դամբանական ճառը հրատարակել խնդրուած է:

(Ի հանգիւստ պարտաւարտութեամբ յարգանքով Յովնան Յովնանի-Եան Յովնանեանց Վիսնանիւնց ի 19 փետրվարի 1878 -ին. առցելով ի հարկաւորութեան ներքին ի 25 փետրվարի:)

Այսօր Հայաստանեայց սուրբ Եկեղեցին կատարեց իւր բաշտօր պաշտօնանց սրբոց Վարդանանց 1056 վկայից հանդիսաւոր յիշատակը: Եւ մինչ սուրբ պարօք էր համարոււմ բարեմաղթել

հանդիստ հոգւոց բաշտօրտի անձանց որք նոյն պատերազմի մէջ բաշտօրեան անուն ժառանգեցին, եւ անս մի անխոր տեսարան է ներկայացնում մեզ սուրբ Եկեղեցին, ուստի աղաչեմ քրիստոսաւեր տիրազգեաց հանդիսականք, թող տուէր ինձ հանդուցելոյս դագաղի վերայ ստել մի բանի խօսք:

Մի երեւելի հոգեբան՝ մարդու կեանքը նմանեցնում է մի դառն բաժակի՝ որոյ կօթանասուն մասի երեքը միայն է բաղըր օշարակ: Այս ինքն մինչեւ հասուն ծերութիւնը՝ որ կօթանասուն տարի հազիւ կլինի եւ աւելին ինչպէս բաղմափործ մարգարէն վկայում է, բոլորովին ցաւօք է եւ նեժուկեամբ, հազիւ մարդոյ այդքան երկար կեանքի մէջ հաշուելով բոլոր ուրախ եւ երջանիկ օրերը՝ երեք տարի է լինում: Ինչ է արդեօք մեր կեանքի մնացեալ օրերը, հազարաւոր ցաւոց, վշտաց, տանջանաց, տառապանաց, սիրելեաց կորստեան եւ այլ բաղմատեսակ թշուառութեանց խառնուրդով լցուած դառն բաժակ, որոյ յատակումն գրուած է մի ստիպալի բառ՝ մահ:

Բայց եւ այնպէս, ոչ ամենայն մարդոյ վիճակեալ է այդ դառն բաժակի մինչեւ վերջին կաթիլը վայելի: Ամանք մի օրական ծաղկի նման առաջին կաթիլը միայն ճաշակելով թառամում են: Կեօք ծաղկաւէտ հասակի մէջ զերեզմանի խաւարային զուբը են դուրում: Եւ սակաւ ոմանք մինչեւ վերջին մրուրը բամելով ծերանում են: Այս շատ անդամ տեսնում ենք, որ քիչ մարդիկ ծերութեամբ են մեռանում եւ շատերը, ինչպէս այս հանդուցեալը, հիււանդութեամբ եւ ցաւօք կեանքի կէս ճանապարհումը:

Մահը յաւիտենական օրինաց անջնջելի դատարկիքն է՝ որ Արարիչը անկապաստ ճայնով որստաց « Հող է իր եւ ի հող դարձցիս »:

Եղան աշխարհիս մէջ իմաստուն եւ հանճարեղ մարդիկ, տշխարհասատ փառաւոր թաղաւորներ, որոց համար ոչ երկինքը եւ ոչ բաղըր ինայեցին հանճար, թագ, դայիտն, իշխանութիւն, պատիւ, հարստութիւն, անուն, զեղեցկութիւն, քաջութիւն, մէկ խօսքով ամենայն վայելչութիւն ինչ որ աշխարհումս գտնուում է եւ որոց վայելողաց անուանում ենք բաղաւոր եւ երջանիկ մարդիկ: Բայց եմէ մոռնեմ նոցա սրտի մէջ, նոցա հոյակապ պալատների մէջ, ոչինչ բաւականութիւն չեմ տեսնում:

Մինը արհամարհելով կանչում է « Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է »: Միւրը անի է բաշում ասելով « Ո՛վ մահ, դառն է յիշատակ քո »: Մինը իւր թագաւորական մատանոյն վերայ ստկալով կարդում է « Յիշեա՛ զմահ »: Միւրը իւր արքայական գաւազանին վերայ է նշմարում այս գրուածը « Եւ սա անցանէ »: Մինը իւր դրան ճակատին վերայ է կարդում « Վաղիւն մեռանելոց ես »: Եւ քանի քանիք եւս չորացած կմայքներ դրած սեղանի վերայ՝ սարսափում են իւրեանց ապագայն այքի առաջ տեսնելով:

Եթէ աշխարհի ամենահարուստ ճոխութիւններն վայելողք ոչինչ են համարում կեանքը եւ նորա վախճութիւնը համարում են ունայնութիւն՝ մահը յիշելով, որքան առաւել եւս մեր՝ որ կեանքի մի կաթիլ քաղցրութեան հետ դառնութեան լիք բաժակն եմք ընդունում:

Ահա մեր կեանքի նկարագիրը եւ ահաւասիկ մեր աչքի առաջ նորա մի տխուր տեսարանը: Այս գոյնզգոյն ծաղկանց պսակների տակ կայ մի տխուր սոսկալի պատկեր, մի երիտասարդ՝ որ հազիւ ճաշակելով իւր կենաց բաժակի երեսուն եւ եօթն մասը՝ ընդունեց մահուան սարսափելի դատանիքը: Հա տարաւ իւր հետ Ազգի եւ իւր մեծարելի հօր շատ յոյսերը եւ ակնկալութիւնը. իւր սիրելի եղբօր, քոյրերի, ազգականաց եւ բարեկամաց եւ մեր խնայքի սրտերի ափ ու հառաչանքը, որոց աղի արտասուներն երովն ցողում են այս ծաղկանց պսակները: Հա տարաւ իւր ծաղկնայ հասակի փառքը եւ վայելչութիւնը: Հորա զեղեցիկ աչքերը այլ եւս չեն բացուիր: նորա ճարտարախօս լեզուն փակուած է մահուան կնքով: Ոչ եւս նորա սիրտը եւ ձեռքերը շարժում են ազգի փառքը արձամարհօղի վերայ վրէժխնդրութեան: Ոտից ցլուխն ցաւերով լցուած, արեամբ շաղախած ննջում է յախտեանկան քնով:

Բայց ինչ եմ ասում, նա չէ այս տեղի անշարժ անկենդան փակուածը, այս նորա ամանն է, այս նորա բեռն է, նորա մարմինն է:

Մի՞թէ ամենաբայի Արարիչը իւր սիրելի արարածը, իւր աստուածային պատկերը այս նպատակաւ ստեղծեց: Ոչ, անմահ Արարչի պատկերը անմահ, անեղծ եւ անսպական պէտք է մնայ: Վկայութիւն ունիմք ի սուրբ գրոց, « Մարմինն զառնայ ի հող, իսկ

հոգին եկանէ առ Աստուած »: « Եթէ այսու կենօր յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ: Հա՛ մեր փրկիչն է, մեր կեանքը, նա է յոյս եւ յարութիւն ամենայն մարդկան: Դուք յաշխարհէ աստի չէք, ասաց նորա աստուածեղէն բերանը:

Հանգուցեալս մկրտութեամբ որդեգրեալ երկնաւորին, ճակատի կնքովն ժառանգաւոր Աստուծոյ խոստացեալ փառաց եւ յախտեանկան կենաց: Ընդունելով Փրկչին մարմինը եւ արիւնը՝ նորա հետ միացաւ հոգով: Իսկ եթէ իբրեւ մարդ սխալական՝ ինչպէս մեր ամենեքեան՝ յանցաւոր էր մեզօր, Քրիստոսի Եկեղեցին մաղթում է նորա մեղաց քաւութիւն եւ հուատամք թէ Աստուած, լսելով հաւատացելոց խնդրուածը՝ պատրաստ է իւր անհուն ողորմութեամբը ներել եւ ընդունել իւր փառաց յարկի մէջ: Մեր յաշխարհէ աստի չէմք, մեր երկնադարաբացիք եմք եւ մեր հայրենիքը յերկինս է:

Դու Աստուածասէր վշտալի հայր, դիտեմ ծանր է քո որդեսէր սրտի համար այս դառն հարուածը, դու որ երկու տարին չբացած քո երկու սիրելի չափահաս որդիքը այս տխուր դամբարանի վերայ տեսար, թող մեծ լինի քո հաւատը եւ սիրով հպատակելով նախախնամութեանը՝ օրհնէ Աստուծոյ կամքը եւ մեր ամենեքեան աղաչեմք զմարդաւէրն Աստուած, իւր երկնաւոր մխլթարութեամբ փարատէ քո սուղը եւ տրտմութիւնը, սոյ ընդ զօրութիւն տանել այն դառն բաժակը եւ քո ժառանգաւորաց եւ աստուածապահ տունը պահէ անսասան իւր խրանմոց եւ հովանաւորութեան ներքեւ զօրացնելով իւր շնորհաց մէջ:

Իսկ դու սիրելի մեր, երթ ի խաղաղութիւն, երթ առ Արարիչն ուր ամենայն սուրբք հանդիսն: Քո սիրելիաց արտասուքը՝ աղօթքը եւ քո յիշատակաւ նոցա ողորմութիւնը եւ բարեգործութիւնը թող վերանան ընդ հետ եւ ընդունելի լինին մեր մաղթանաց հետ առաջի Աստուծոյ:

Ընդ հոգւոց արդարոց կատարելոց եւ զհողի ծառայի քո Յովաննուս ընդ սուրբս քո հանգն Մարգասէր:

ԱՄԵՒ ՔԱՇԱՂԱՅ ՏԱԿՈՒ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ: